## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| NN | ԱՆՎԱՆՈՒՄ | ԾԱՆՈԹ. |
|---|---|---|
| 1 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ | ՃԼ-1 |
| 2 | ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՃԼ-2 |
| 3 | ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՃԼ-3 |
| 4 | ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՃԼ-4 |
| 5 | ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ԿՏՐՎԱԾՔ «1-1» | ՃԼ-5 |
| 6 | ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ՇԵՆՔԻ ՃԱԿԱՏ ԸՍՏ «Ա» ԱՌԱՆՑՔԻ | ՃԼ-6 |
| 7 | ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ՇԵՆՔԻ ՃԱԿԱՏ ԸՍՏ «Ե» ԱՌԱՆՑՔԻ | ՃԼ-7 |
| 8 | ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ՇԵՆՔԻ ՃԱԿԱՏ ԸՍՏ «8» ԱՌԱՆՑՔԻ | ՃԼ-8 |
| 9 | ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ՇԵՆՔԻ ՃԱԿԱՏ ԸՍՏ «1» ԱՌԱՆՑՔԻ | ՃԼ-9 |
| 10 | ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ | ՃԼ-10 |
| 11 | ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՃԼ-11 |
| 12 | ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՃԼ-12 |
| 13 | ԿՏՐՎԱԾՔ «1-1», «2-2» | ՃԼ-13 |
| 14 | ՇԵՆՔԻ ՃԱԿԱՏ ԸՍՏ «Ա» ԱՌԱՆՑՔԻ | ՃԼ-14 |
| 15 | ՇԵՆՔԻ ՃԱԿԱՏ ԸՍՏ «Ե» ԱՌԱՆՑՔԻ | ՃԼ-15 |
| 16 | ՇԵՆՔԻ ՃԱԿԱՏ ԸՍՏ «8» ԱՌԱՆՑՔԻ | ՃԼ-16 |
| 17 | ՇԵՆՔԻ ՃԱԿԱՏ ԸՍՏ «1» ԱՌԱՆՑՔԻ | ՃԼ-17 |
| 18 | ՇԵՆՔԻ ՃԱԿԱՏ ԸՍՏ «Ա» ԱՌԱՆՑՔՆԵՐԻ,ԳՈՒՆԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ, ՉԱՓԱԿԱՊՈՒՄ | ՃԼ-18 |
| 19 | ՇԵՆՔԻ ՃԱԿԱՏ ԸՍՏ «Ե» ԱՌԱՆՑՔՆԵՐԻ,ԳՈՒՆԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ, ՉԱՓԱԿԱՊՈՒՄ | ՃԼ-19 |
| 20 | ՇԵՆՔԻ ՃԱԿԱՏ ԸՍՏ «8» ԱՌԱՆՑՔՆԵՐԻ,ԳՈՒՆԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ, ՉԱՓԱԿԱՊՈՒՄ | ՃԼ-20 |
| 21 | ՇԵՆՔԻ ՃԱԿԱՏ ԸՍՏ «1» ԱՌԱՆՑՔՆԵՐԻ,ԳՈՒՆԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ, ՉԱՓԱԿԱՊՈՒՄ | ՃԼ-21 |
| 22 | ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ | ՃԼ-22 |
| 23 | ԴՌՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ | ՃԼ-23 |
| 24 | ՀԱՏԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ | ՃԼ-24 |
| 25 | ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ, ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | ՃԼ-25 |
| 26 | ՄԱՆԿԱԿԱՆ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ԼԱՄԻՆԱՏԵ ՄԻՋՆՈՐՄՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՍԽԵՄԱ | ՃԼ-26 |
| 27 | ԿԱԽՈՎԻ ԱՌԱՍՏԱՂԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՍԽԵՄԱ | ՃԼ-27 |
| 28 | ՏԱՆԻՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՃԼ-28 |
| 29 | ՏԱՆԻՔԻ ՓԱՅՏԵ ՏԱՐՐԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱ | ՃԼ-29 |
| 30 | ՏԱՆԻՔԻ ՀԱՏՈՒՅԹՆԵՐ «1-1», «2-2», «3-3» | ՃԼ-30 |
| 31 | ՏԱՆԻՔԻ ՀԱՏՈՒՅԹՆԵՐ «4-4», «5-5», «6-6» | ՃԼ-31 |
| 32 | ՏԱՆԻՔԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ | ՃԼ-32 |
| 33 | ՏԱՆԻՔԻ ՓԱՅՏԵ ՏԱՐՐԵՐԻ ԿՑՈՐԴՄԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ | ՃԼ-33 |
| 34 | ՀՈՎԱՐ - 1, 2 | ՃԼ-34 |
| 35 | ՀԱՐԹԱԿՆԵՐ 1, 2, 3, ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ՀԱՏՈՒՅԹՆԵՐ, ԹԵՔԱՀԱՐԹԱԿ | ՃԼ-35 |
| 36 | ՑԱՆԿԱՊԱՏԻ ՀԱՏՎԱԾՆԵՐ «Ա-Բ», «Բ-Գ», «Գ-Դ» | ՃԼ-36 |
| 37 | ՑԱՆԿԱՊԱՏԻ ՀԱՏՎԱԾՆԵՐ «Դ-Ե», «Ե-Զ» | ՃԼ-37 |
| 38 | ՑԱՆԿԱՊԱՏԻ ՏԱՐՐԵՐԻ ՍԽԵՄԱ | ՃԼ-38 |
| 39 | ԴՌՆԱԿ-ԴԱՐՊԱՍ, ՄԵՏԱՂԱԿԱՆ ՑԱՆԿԱՊԱՏԻ ՀԱՏՎԱԾ | ՃԼ-39 |

**ՏՎՅԱԼ ՆԱԽԱԳԻԾԸ ՄՇԱԿՎԱԾ Է ՀՀ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ:**

**ՆԳՃ՝** (ստորագրություն) **Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

**ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱԶՄՎԵԼ Է TGQ-01 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ:**

**ՇԵՆՔԸ ԿԱՌՈՒՑՎԵԼ Է 1972 թ.: ԱՅՆ ՔԱՐԵ ՇԵՆՔ Է՝ ԲԱՂԿԱՑԱԾ ԵՐԿՀԱՐԿԱՆԻ ԵՎ ՄԻԱՀԱՐԿ ԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐԻՑ, ՈՐՈՆՔ ԻՐԱՐ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԵՆ ՄԻԱՀԱՐԿ ԱՆՑՈՒՂՈՎ: ՏԱՆԻՔԸ ԼԱՆՋԱՎՈՐ Է՝ ԱՍԲՈՇԻՖԵՐԵ ԾԱԾԿՈՒՅԹՈՎ: ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՎԱՏ ՎԻՃԱԿՈՒՄ Է, ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՍԵՅՍՄԻԿ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ: ՆԵՐԿԱ ՊԱՀԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ:**

**ԸՍՏ ՆԱԽԱԳԾԻ՝ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԾԱԾԿԻ ՍԱԼԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ, ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՆԵՐԻ ՔԱՆԴՈՒՄ, ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ, ՎԵՐԱՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ, ՇԵՆՔԻ ՇՈՒՐՋ ՍԱԼՎԱԾՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ:**

**ՎԵՐԱՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՔԱՆԴՎՈՒՄ ԵՆ ՄԻՋՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՄԻՋՆՈՐՄՆԵՐԸ, ԴՌԱՆ ՈՒ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԲԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԵՂԵՐՈՒՄ, ԵՎ ՇԱՐՎՈՒՄ ԵՆ ՆՈՐ 100մմ ԵՎ 200մմ ՄԻՋՆՈՐՄՆԵՐ: ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՓԱՅՏԵ ՀԻՆ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ՆՈՐ ՄԵՏԱՂԱՊԼԱՍՏԵ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐՈՎ, ՓԱՅՏԵ ՀԻՆ ԴՌՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ՆՈՐ ԴՌՆԵՐՈՎ՝ ԱՐՏԱՔԻՆ ԴՌՆԵՐԸ ԱԼՅՈՒՄԻՆԵ ՋԵՐՄԱԿԱՄՐՋԱԿՈՎ, ՆԵՐՔԻՆ ԴՌՆԵՐԸ ՄԴՖ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑԻ ԴՌՆԵՐԸ՝ ՄԵՏԱՂԱՊԼԱՍՏԵ: ՀԱՏԱԿՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ԸՍՏ ՆԱԽԱԳԾԻ՝ ՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ, ՆՆՋԱՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ՝ ՎԻՆԻԼԱՅԻՆ ՀԱՏԱԿՆԵՐ, ՄԻՋԱՆՑՔՆԵՐՈՒՄ՝ ՄԱՄԼԱԳՐԱՆԻՏԵ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ, ԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ, ՋԵՐՄԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑՈՒՄ՝ ԽԵՑԵՍԱԼԵ ԾԱԾԿՈՒՅԹՈՎ: ՀԱՐԴԱՐՈՒՄԸ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է՝ ՊԱՏԵՐԸ՝ ԽԱՂԱՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ, ՆՆՋԱՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ, ՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ ԳԱՋԻ ՍՎԱՂ ԼԱՏԵՔՍԱՅԻՆ ՆԵՐԿՈՒՄՈՎ, ԽՈՀԱՆՈՑՈՒՄ, ԲՈՒՖԵՏՆԵՐՈՒՄ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՄ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԵՐԱՄԻԿԱԿԱՆ ՍԱԼԻԿ ՆԵՐՈՎ ԵՐԵՍՊԱՏՈՒՄ ՑԵՄԵՆՏԱՎԱԶԱՅԻՆ ՇԱՂԱԽԻ ՎՐԱ, ԱՌԱՍՏԱՂՆԵՐԸ ԽԱՂԱՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ, ՆՆՋԱՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ՝ ԳԻՊՍԱՍՏՎԱՐԱԹՂԹԵ ՍԱԼԵՐԻՑ ԼԱՏԵՔՍԱՅԻՆ ՆԵՐԿՈՒՄՈՎ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐՈՒՄ «ԱՐՄՍԹՐՈՆԳ» ՏԻՊԻ ԿԱԽՈՎԻ ԱՌԱՍՏԱՂՆԵՐՈՎ:**

**ՏԱՆԻՔԸ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՀԻՆ ԱՍԲՈՇԻՖԵՐԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ՆՈՐ ՓԱՅՏԵ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐՈՎ ԵՎ ՄԵՏԱՂԱԿՂՄԻՆԴՐԻ ԾԱԿՈՒՅԹՈՎ: ՏԱՆԻՔՈՒՄ ԻՐԱԿՆԱՑՎՈՒՄ Է ՆԱԵՎ ԳՈԼՈՐՇԱՄԵԿՈՒՍԻՉ ՇԵՐՏ ԵՎ ՋԵՐՄԱՄԵԿՈՒՍԻՉ ՊԵՐԼԻՏԵ ՊԱՐԿԵՐՈՎ ՇԵՐՏ: ՍԱՆԴՂԱՎԱՆԴԱԿԻ ԱՆՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՎԱՏ ՎԻՃԱԿԻ ՊԱՏՃԱՌՈՎ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿԸ ՔԱՆԴՎՈՒՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ Է ՆՈՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԱԽԱԳԾԻ, ՈՐԸ ԵՐԵՍՊԱՏՎՈՒՄ Է ՄԱՄԼԱԳՐԱՆԻՏԵ ՍԱԼԵՐՈՎ, ՏԵՂԱԴՐՎՈՒՄ Է ՆՈՐ ԱԼՅՈՒՄԻՆԵ ԴԵԿՈՐԱՏԻՎ ԲԱԶՐԻՔ ՀԱՎԱՔՈՎԻ ՏԱՐՐԵՐԻՑ:**

**ՃԱԿԱՏՆԵՐԻ ՊԱՐԱՊԵՏԸ ԲԱՐՁՐԱՑՎՈՒՄ Է 40սմ-ՈՎ (ՏԵՍ *ԵՎ* ԹԵՐԹԵՐԸ), ԱՊԱ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻՑ ՀՈՏՈ ՍՎԱՂՎՈՒՄ ՑԵՄԵՆՏԱՎԱԶԱՅԻՆ ՇԱՂԱԽՈՎ ԵՎ ԳՈՒՆԱԶԱՐԴՎՈՒՄ ԵՆ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՃԱԿԱՏՆԵՐԻ ԷՍՔԻԶԻ: ՃԱԿԱՏՆԵՐԻ ՎՐԱՅԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՆԿԱՐՎԱԾՔԸ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՃԱԿԱՏԱՅԻՆ ՋՐԱԿԱՅՈՒՆ ՈՐԱԿՅԱԼ ԳՈՒՆԱՎՈՐ ՆԵՐԿԵՐՈՎ, ԻՍԿ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ ՄՈՒԳ ԳՈՒՅՆԻ ՆԵՐԿՈՎ ՄՈՏ 3սմ ՀԱՍՏՈՒԹՅԱՆ (ՀՆԱՐԱՎՈՐ Է ՄՈՒԳ ԿԱՊՈՒՅՏ, ՇԱԿԱՆԱԿԱԳՈՒՅՆ ԿԱՄ ՄՈԽՐԱԳՈՒՅՆ ԿԱՄ ՍԵՎ): ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՈՐՄՆԱԽԱՐԻՍԽԸ ԵՐԵՍՊԱՏՎՈՒՄ Է ԲԱԶԱԼՏԵ 30սմ ՍԱԼԵՐՈՎ, 600մմ ՈՉ ՊԱԿԱՍ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՄԲ:**

**ՇԵՆՔԻ ՇՈՒՐՋ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է 1.2մ ԼԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԲԱԶԱԼՏԵ ԲՐԵԿՉԱՅԻՑ ՍԱԼՎԱԾՔ ԲԱԶԱԼՏԵ ԵԶՐԱՔԱՐԵՐՈՎ:**

**ՏԱՐԱԾՔԸ ԲԱՐԵԿԱՐԳՎՈՒՄ Է. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ 5 ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ ( ՄԵԿԸ ԽԱՂԱՅԻՆ ԿԱՐՈՒՍԵԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԱՎԱԶԻ ԼԻՑՔՈՎ), ԲԱԶԱԼՏԵ ԵԶՐԱՔԱՐԵՐՈՎ, ՈՐՈՆՔ ԻՐԱՐ ԿԱՊՎԱԾ ԵՆ ԲԱԶԱԼՏԵ ԲՐԵԿՉԱՅՈՎ ԱՆՑՈՒՂԻՆԵՐՈՎ: ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՆԱԵՎ ԱՍՖԱԼՏԵ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀ, ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՇՈՒՐՋ ՀԻՆ ՑԱՆԿԱՊԱՏԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄ ԵՎ ՆՈՐ ՑԱՆԿԱՊԱՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԴՐՈԲ ՑԱՆՑՈՎ, ԴՌՆԱԿ ԴԱՐՊԱՍԻ ՄՈՆՏԱԺՈՒՄ, ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՅՈՒՂԱՆԵՐԿՈՒՄ, ԾԱՌԵՐԻ ԵՎ ԹՓԵՐԻ ՏՆԿՈՒՄ:**

**ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ԿՈՅՈՒՂՈՒ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ, ՆՈՐ ՋՈՒԳԱՐԱՆԱԿՈՆՔԵՐԻ, ԼՎԱՑԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՑՆՑՈՒՂԱՐԱՆՆԵՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ: ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ՋԵՌՈՒՑՄԱՆ, ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, ԳԱԶԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ:**

| ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ՝ TGQ-01 | | | | ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱԿՔԱՐ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| ՆԱԽԱԳԾ. | Տ. ԱՂԱՍԱՐՅԱՆ | | | | ԱՆ | ՃԼ-1 | 39 |
| ՆԱԽԱԳԾ. | Թ. ՀՄԱՅԱԿՅԱՆ | | | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ | | | |
| ՆԳՃ | Հ. ՂՈՒԿԱՍՅԱՆ | (ստորագրություն) | | | | | |
| ՊԱՇՏՈՆ | ԱԶԳԱՆՈՒՆ | ՍՏՈՐԱԳՐ. | | | | | |